# ԹԲԻԼԻՍԻՆ ՄԵԾԱՐԵՑ ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆԻՆ

*Դեկտեմբերի 12-ին լրացավ վիրահայ մեծանուն գրող, լրագրող, Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի երարամյա նախագահ, «Վրաստան» թերթի մշակույթի եւ գրականության երկարամյա բաժնի վարիչ, «Կամուրջ» տարեգրքի խմբագրական խորհրդի նախագահ, Վրաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Բենիկ Սեյրանյանի (1913-2003) ծննդյան 100-ամյակը:*

Այդ հիշարժան հոբելյանը նշելու եւ մեր կողքին ապրած ու հայ գրականության մեջ իր մնայուն հետքը թողած անվանի գրողի հիշատակը խնկարկելու եւ մեծարելու նպատակով Վրաստանի գրողների միության եւ «Վրաստան» թերթի նախաձեռնությամբ նույն օրը Վրաստանի Գրողների տանը կայացավ հանդիսույթ, որին



իրենց մասնակցությունն էին բերել մայրաքաղաքի հայ ու վրացի գրասեր հասարակայնության ներկայացուցիչները, մարդիկ, որոնք ճանաչել են մեծ գրողին, վայելել նրա կենդանի, համով, հոտով խոսքը, նրա բարի ու մարդկային անհատականության բարեկամությունը, պարզապես եղել նրա ընթերցողերկրպագուները:

Բացելով միջոցառումը, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին ներկայացրեց հայ գրողի կենսագրությունը եւ արժեւորեց նրա մեծ դերակատարումը հայ-վրաց գրական առնչությունների ամրապնդման գործում:

Այնուհետեւ Բենիկ Սեյրանյան մարդու, լրագրողի, գրողի ու ազգային-հասարակական գործչի մասին հանգամանալից խոսեց «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Նա հատկապես ընդգծեց այն իրողությունը, որ Բենիկ Սեյրանյանը թերթում աշխատել է մի ամբողջ կյանք՝ 70 տարի (1933-2003թթ.), որ հեռավոր 1933 թվականին նրան, 20-ամյա երիտասարդին ընդունեցին որպես թերթի հաստիքային աշխատակից եւ որ խմբագրությունում պահվող նրա աշխատանքային գրքույկում միայն մի գրանցում է՝ «Ընդունվել եւ մինչեւ կյանքի վերջը աշխատել է խմբագրությունում»:

Իր գրական ուսուցչի մասին հանգամանալից ու հուզիչ խոսեց բանաստեղծուհի, թարգմանիչ, «Կամուրջ» տարեգրքի խմբագիր Անահիտ Բոստանջյանը՝ Բենիկ Սեյրանյանի ստեղծագործությունը դիտարկելով որպես երեւույթ հայ գրականության մեջ, Բենիկ Սեյրանյանին ներկայացնելով որպես նովելի վարպետ, որպես դասական գրող, որի ստեղծագործությունը դեռ շատուշատ հետազոտությունների, ուսումնասիրությունների կարիք ունի՝ նրան իր արժանի տեղը հատկացնելու համար հայ գրականության անդաստանում:

Ընթերցվեցին նաեւ Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի, Արտավազդ Սարեցյանի (Սուուխումի) ուղերձները գրողի 100-ամյակի առիթով, ինչպես նաեւ Սեյրանյանին հիանալի ճանաչող գրողներ Բակուր Կարապետ-




յանի, Լեւոն Մութաֆյանի (Երեւան), Գարուշ Հարյանցի (ԱՄՆ) ողջույնի խոսքերը:

Բենիկ Սեյրանյան գրողին Դարի մարդ ու մեծ թբիլիսցի անվանեց ու թե՛ որպես գրողի, թե՛ որպես մարդու արժեւորեց անվանի բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը:

Սեյրանյանի մասին հուշեր պատմեցին, նրա վաստակը կարեւորեցին, վիրահայ գրականության մեջ ու ընդհանրապես համայնքում նրա անփոխարինելի դերի, նրա թատերգությունների, դպրոցական աշխարհի հետ նրա սերտ կապի մասին խոսեցին Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության նախարարության աշխատակից Կարինե Մանուկյանը, ով առաջարկեց սահմանել Բենիկ Սեյրանյանի անվան գրական մրցանակ, եկարամյա մանկավարժներ Նորայր Բաղդասարյանը, Նազիկ Ոսկանյանը, Մանանա Կարապետյանը, բանսիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էմմա Ախտյանը, Վիրահայոց թեմին կից գործող «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը, այլք:

Միջոցառումից հետո ներկաները ուղղվեցին դեպի Թբիլիսիի Հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն՝ գրողի շիրիմի մոտ խնկարկելու նրա հիշատակը եւ ծաղիկներ դնելու նրա գերեզմանին: Այստեղ մատուցվեց հոգեհանգստի պատարագ, որը մատուցեց Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու քահանա Տեր Սամվել Թորոսյանը:

Հանդիսություններին մասնակցում էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը:

***ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***
*Լուսանկարները՝ Վալերի Հունանյանցի*

# ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿՆՇՎԻ ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

*Երբ Երեւան էր գալիս ու հանդիպում նաեւ մեր՝ այն ժամանակ դեռ երիտասարդ իմ սերնդի գրողներիս հետ, շրջապատը մի տեսակ լցնում էր իրենով, իր խոսքաշեն, հետաքրքիր, համով-հոտով զրույցներով, որոնց մեջ մաքրամաքուր, ժողովրդական բառ ու բանով լի հայոց լեզուն էր ցոլանում: Մենք ուշադիր լսում էինք նրան, սովորում նրանից, կարդում նրա գեղեցիկ նովելներն ու պատմվածքները, վիպակները, իրար հետեւից հրատարակվող գրքերը:*

Հայաստանյան մեր եւ մեզանից ավագ սերունդը՝ Համո Սահյանը, Հրաչյա Հովհաննիսյանը եւ էլի շատ ուրիշներ նրա տաղանդի ու մարդկային բարձր հատկանիշների երկրպագուներն էին, սիրում-հարգում էին Բենիկ Սեյրանյանին, ու մենք էլ գնում էինք այդ սիրո հետքերով: Հաճելի էր եւ սեղան նստել նրա հետ, ընտիր սեղանակից էր, ընտիր թամադա: Եվ, այսուամենայնիվ, բացառիկ էր նրա կամրջող դերը մեր սիրելի վրաց գրականության հետ: Յուրաքանչյուր նորություն Վրաստանի մայրաքաղաքում կապված գրական գրականության ու մշակույթի հետ, հիմնականում լսում էինք Բենիկ Սեյրանյանից: Նա էր վրաց գրականության դեսպանը Հայաստանում եւ ընդհակառակը՝ հայ գրականության դեսպանը՝ Վրաստանում:

Այսօր էլ աչքիս առջեւ է Սեյրանյանի փառահեղ կերպարանքը՝ բարձրահասակ, թիկնեղ, դեմքի գեղեցիկ դիմագծերով: Եվ... նորից ու նորից իմաստուն, իմաստուն:

...Այսօր մեզ ծանոթ այս մեծ գրողի 100-ամյակն է բոլորել: Մեծ խորհուրդ կա այս իրողության մեջ, որ մեր սերունդը բախտ ունի թարմ հիշել իր կողքին ապրած, հայ գրականության անդաստանը հարստացրած այնպիսի մեծության հետ, ինչպիսին է Բենիկ Սեյրանյանը:

Շնորհավորում եմ Բենիկ Սեյրանյանի 100-ամյակը եւ հավաստում, որ մոտ ամիսներին Հայաստանի գրողների միության նախաձեռնությամբ, Վրաստանի գրողների միության հետ համատեղ Երեւանում հանդիսավորապես կնշվի Բենիկ Սեյրանյանի 100-ամյա հոբելյանը:

***ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ***
*Հայաստանի գրողների միության նախագահ, արձակագիր*

# ԿՅԱՆՔԻ ԳԱՐՈՒՆԸ

*Շուրջ երեսուն տարի առաջ Երեւանում լույս տեսնող «Գրական թերթի» հերթական համարը հասկանալի պատճառներով ստացա մի քանի օր ուշացումով: Թերթն ընթերցող հասարակայնությանը տեղեկացնում էր, որ փետրվարի 9-ին Հայաստանի գրողների միության դահլիճում անց է կացվելու Բենիկ Սեյրանյանի հոբելյանական երեկոն:*

Առաջինը, ինչի մասին մտածեց, այն է, որ նման երեկո մեզանում դեռ չի անցկացվել եւ չէի կարծում, որ այն կարող էր անցկացվել առանց լուսաբանման...

Երկրորդը, ինչի մասին մտածեցի, այն էր, որ հոբելյարը այն գրողների թվին է պատկանում, ով լայն ճանաչում ունի եւ որպես ստեղծագործող ու հասարակական գործիչ, ըստ արժանվույն գնահատվում է նաեւ երկրի սահմաններից դուրս:

Այն ժամանակ լրացել էր պարոն Բենիկի 70-ամյակը, եւ ինչպե՞ս նա կարող էր չգնահատվել, երբ հանդիսանում էր բազում նովելների, վեպերի ու վիպակների հեղինակ, որոնք լայն ճանաչում էին բերել նրան ընթերցող հասարակության շրջանում:

Վրաստանում էլ լավ էին ճանաչում նրա ստեղծագործությանը: Այն պարզ պատճառով, որ նրա գրեթե բոլոր նշանակալի գործերը թարգմանվել էին վրացերեն լեզվով:

Բնությամբ բանաստեղծ էր, ինչը է՛լ ավելի գրավիչ էր դարձնում նրա ստեղծագործությունը, նրա ամենօրյա գործունեությունը մշակութային ոլորտն էր: Կարելի է վստահությամբ ասել, որ նա մեզանում հանդիսանում էր մշակութային ինքնավարության ղեկավարը, Վրաստանում հայ գրողների ղեկավարը:

Այն, որ լրագրությունը հասարակության հետ ակտիվ հաղորդակցվելու միջոց է, ակնհայտ ճշմարտություն է: Սակայն բացառությունների է շնորհված հաղորդակցումը մտերմության աստիճանի հասցնելու ունակությունը եւ պարոն Բենիկը դրա մեծագույն օրինակն է:

Նա իմ ավագ բարեկամն էր եւ նրա հետ բոլոր հանդիպումները յուրովի արժանահիշատակ էին: Հիացմունք էին պատճառում նրա գունեղ համեմատությունները, էլ չեմ խոսում ուրախության սեղանների շուրջ անցկացված ժամերի մասին, որտեղ նրա յուրաքանչյուր խոսքը առանձնակի նշանակություն ու երանգ էր ստանում: Դա կյանքի ընկալման յուրատեսակ փոքր «ակադեմիա» էր:

Այսօր Բենիկ Սեյրանյանը կդառնար 100 տարեկան: 100-ամյակից վերջին տասը տարին պակասեց եւ, չնայած նրա երկարակեցությանը, նրա «կյանքի գարունը» շարունակվեց մինչեւ վերջին շունչը:

***ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐ***
*Բանաստեղծ-թարգմանիչ*

# ՆՐԱ ԿԱՐԾԻՔԸ ՎԵՐՋՆԱԿԱՆՆ ԷՐ ՈՒ «ԱՄԵՆԱ»-Ն

- Շնորհավոր ծնունդդ, Բենիկ Նիկիտիչ...

15 տարի շարունակ, դեկտեմբերի 12-ին, դիմում էի իմ բաժնի վարիչին, երբ ներս էր մտնում աշխատասենյակ: Խմբագրության աշխատակիցներիս համար նա արվեստագետի խորհրդավորությամբ պատված առասպելի հերոս եւ առեղծված չի եղել երբեք:

Դեռ կենդանության օրոք՝ «Ժամանակակից հայ գրականության նահապետ» պատվանվանն արժանացած Բենիկ Սեյրանյանը մեզ համար սովորական մի մահկանացու էր, մեզ հետ ուրախություն ու վիշտ, առօրյայի հոգսեր կիսող, կատակող, զայրացող գործընկեր: Ավագ գործընկեր եւ բացառիկ հեղինակություն, ում կարծիքը մեծ ու փոքրի համար վերջնականն էր ու «ամենա»-ն...

Նախախնամության կամքով, շուրջ 15 տարի, աշխատել եմ միեւնույն աշխատասենյակում:

Իր ժողովրդի արժանապատվությունը գնահատող ճշմարիտ հայրենասերը միայն կկարողանար դառնալ մեկ այլ երկրի նվիրված քաղաքացին եւ այդչափ ճշմարտախոս լինել՝ մարդկության քաղաքակրթության մեջ ունեցած ա'յդ երկրի պատմական դերի գնահատման մեջ: Նա դարձավ Վրաստանի ու նրա մայրաքաղաքի հոգեւոր մարտիկը:

Պատմական հայրենիքից դուրս ապրող հայը չպետք է մոռանա, որ իրենով մի ամբողջ ազգ է ներկայացնում,- ասում էր Բենիկ Սեյրանյանը: Նա սերտ բարեկամություն էր անում վրաց Մեծերի հետ՝ Կոնստանտինե Գամսախուրդիայից ու Իրակլի Աբաշիձեից մինչեւ Ջանսուղ Չարկվիանի ու Ռեզո Ամաշուկելի: Այդ բարեկամությունը նրանում լի էր ազգային պատասխանատվության նախանձախնդիր զգացումով, որովհետեւ նաեւ իրենով էր վրացին ճանաչելու հայ մարդուն:

Միշտ հիշում եմ, որ նա խիստ կարեւորում էր մանկավարժի դերը մանկան կյանքում, իսկ խոսելով արվեստի ու գրականության մասին, հաճախ կրկնում էր. նայում ես արեւածագին, որ տեղով արվեստ է ու հիանում ես:

... Մի անգամ, միջանցքից սենյակ մտնելիս, կանգնեց գրասեղանի մոտ եւ, ասես, տեսածի տպավորության տակ, ասաց՝ դիմացդ կին է, բայց ո՞ւր է նազանքը, չկա՞, կորե՞լ է, եւ, ի նշան հիասթափության, ձեռքը թափով խփեց ազդրին... Պահը որսալով՝ հարցրի. ձեր կարծիքով՝ նազա՞նքն է կանացի դարձնում կնոջը, նաեւ՝ նազանքը, ասաց ու, մի պահ խորհելով, շարունակեց, բայց կանացիության խորհուրդը, աղջիկ ջան, հպարտ հեզության մեջ է...

Ամեն ինչ իր հատուցման պահն ունի: Այսօր երախտիքի ժամն է, ու ես, իմ երախտիքն եմ հայտնում նրա տողերով ասված մի բանաստեղծի հասցեով. «Ես սրտանց օրհնում եմ ձեր ծնունդը եւ շնորհակալություն հայտնում ամեն ինչի համար՝ ձեզնով կյանքը ճանաչելու ու կյանքը սիրելու համար...»:

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàÐÐàôð¸Üºð

Ðà¶º´²ÜàôÂÚàôÜ

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՄՂՁԱՎԱՆՋ



***Անձնական փորձով համոզվեցի, որ, այսպես կոչված, անցումային տարիքում երեխաները անճանաչելիության աստիճան փոխվում են: Համոզվել եմ, սակայն չգիտեմ, ի՞նչ կարելի է դրան հակադրել:***

***Գ.ՊՈՂՈՍՅԱՆ***

***Թբիլիսի***

Ընդունված կարծիք կա, որ անցման տարիքում պատանիներն անհամարժեք պահվածք են դրսեւորում: Մեծերին չեն լսում, կանոններին չեն ենթարկվում, արգելքները շրջանցում են եւ անում են ամեն ինչ, որպեսզի իրենց ծնողներին խելագարության հասցնեն: Ծնողները կորցնում են իրենց հեղինակությունը եւ դրությունը փրկելու համար տենդորեն անցնում երեխային դաստիարակելու գործին, ի դեպ, այնպիսի մեթոդներով, որոնցով մի ժամանակ դաստիարակել են իրենց: Մեկ-երկու տարվա ընթացքում հաջողացնում են կամակորին կոտրել, սակայն խնդիրն այն է, որ հիմնականում հենց նրանց կողմից ձեռնարկված գործողություններն են անցումային ժամանակաշրջանը դարձնում մղձավանջ:

Հոգեբանները հաճախ են ասում, որ եթե ցանկանում եք մեկընդմիշտ փչացնել ձեր շան բնավորությունը, նրան մշտապես ամեն ինչ արգելեք: Մեկ-երկու ամսից ձեր «չի կարելին» խիստ արգելքից կվերածվի փուչ ձայնարկության, եւ շունն այլեւս դրան չի արձագանքի: Մարդը նույնպես այդպես է կառուցված, եթե երեխային ամեն ինչ անընդհատ արգելեք, ապա ծանրակշիռ «չի կարելի»-ն իր ողջ ուժը կկորցնի: Դեռահասի առջեւ անդադար պատնեշներ շարելու կարիք չկա:

Ðºî²øðøÆð ¾

## ՈՐՏԵՂԻՑ Է ԾԱԳԵԼ ԱՆՁԵՌՈՑԻԿԸ



***Կան առանձին պարագաներ, որոնք օգտագործում ենք, առանց խորանալու դրանց նշանակության ու ծագման հարցում: Բստ իս, նմաններից է անձեռոցիկը: Հետաքրքիր է, ի՞նչ պատմություն ունի այդ առօրեական պիտույքը:***

***Վ.ՍԱՐԳՍՅԱՆ***

***Մառնեուլի***

Հին Հունաստանում մոտավորապես 3500 տարի առաջ ընդունված կարգ կար, որ ստրուկը կամ ծառան ուտելու ընթացքում պետք է տիրոջ շուրթերը մաքրեր թզի տերեւով... Կարելի է ենթադրել, որ անձեռոցիկը հենց այստեղից էլ առաջացել է:

Սակայն առաջին անգամ իսկական անձեռոցիկ սկսել են օգտագործել Հին Հռոմում շուրջ 2000 տարի առաջ: Ազնվատոհմ տներում անձեռոցիկները կարում էին քաթանից եւ դրանց վրա ասեղնագործում տանտիրոջ անվան սկզբնատառերը: Սակայն հյուրերը հաճախ իրենց հետ տանում էին այդ գեղեցիկ անձեռոցիկները, եւ հետագայում հյուր գնալիս սեփական անձեռոցիկը վերցնելու առաջարկ եղավ: Սակայն երեկույթները հաճախ ձգվում էին մինչեւ առավոտ, եւ հյուրերը հրաժարվում էին իրենց անձեռոցիկները բերել, քանի որ դրանք պարզապես կարող էին կորցնել կամ մոռանալ: Միջին դարերում անձեռոցիկների գործածումը լայն տարածում գտավ, եւ հրավիրվածներն արդեն ստիպված էին դրանք իրենց տներից բերել: Նաեւ թույլատրելի էր համարվում ուտելու ժամանակ բերանն ու ձեռքերը սփռոցով մաքրելը...

ԸՆԿԱԼՈՒՄ

## ԿԱՆԱՅՔ ԻՐԵՆՑ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԻՆ ԲՈՒՅՐՈՎ ԵՆ ՏԱՐԲԵՐՈՒՄ

*Օվուլյացիայի շրջանում կնոջ բույրը գերազանցում է մյուս կանանց տեստոստերոնի մակարդակը, որն, իր հերթին, նրանց ագրեսիվ է դարձնում, պարզել են ամերիկացի գիտնականները:*

Հայտնի է, որ օվուլյացիայի հոտը որոշ մարդկանց համար հաճելի է, բայց նրանք չեն գիտակցում, թե ինչպես է դա ազդում իրենց վարքի վրա: Նախկինում Ֆլորիդա նահանգի համալսարանից Ջոն Մեները պարզել էր, որ դա կարող է մեծացնել տղամարդկանց տեստոստերոնի մակարդակը՝ փորձի մասնակիցները հակվում էին սիրահետումների: Այս անգամ Մեները եւ նրա գործընկեր Ջեյմս Մաքնալթին որոշեցին պարզել, թե ինչպես է նույն հոտը ազդում կանանց վրա:

18-ից 21 տարեկան աղջիկների երկու խմբերի տրվել են շապիկներ. առաջին խումբը դրանք կրել է դաշտանային շրջանի 13-15-րդ օրերին (սեռական ակտիվության բարձր մակարդակ), երկրորդը՝ 20-22-րդ օրերին (սեռական ակտիվության ցածր մակարդակ): Ընդ որում նրանց խնդրել են զերծ մնալ սեռական հարաբերություններից, օգտագործել անհոտ օճառ եւ շամպուն, առհասարակ չօգտագործել օծանելիք ու դեզոդորանտ, չունել «հոտավետ» ուտելիքներ: Երրորդ խումբը պարզապես պետք է հոտոտեր շապիկները. գիտնականներն ասել էին աղջիկներին, որ հետազոտության նպատակն է գնահատել «որքան բան կարող ենք ասել մարդու մասին՝ այդ ընթացքում նրան երբեւէ չտեսնելով», եւ չէին հայտնել, թե երբ են այդ շապիկները կրել: Պարզվել էր, երբ կանայք հոտոտում են սեռական բարձր ակտիվությամբ աղջիկների շապիկները, տեստոստերոնի մակարդակը բարձրանում է, եւ հակառակը, ցածր ակտիվության հոտը այն նվազեցնում էր: Ավելի վաղ հաստատվել էր, որ տեստոստերոնը կապ ունի ագրեսիվության եւ մրցակցության ոգու հետ, ուստի գիտնականները համոզված են, որ օվուլյացիայի շրջանն ազդում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց վրա՝ նրանց դարձնելով ագրեսիվ ու շրջապատի հանդեպ թշնամական տրամադրվածությամբ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ՀԻԳԻԵՆԱՅԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Դեռ հին ժամանակներում մարդիկ հիվանդությունների ծագումը վերագրում էին աստվածներին: Սակայն հիմնականում հենց այդ ժամանակներից էլ մարդիկ ստեղծել են կանոններ, որոնք պետք էր պահպանել, որպեսզի առողջությունը վնաս չկրեր: Այդ կանոնները կոչվում են հիգիենա:*

Հին հունական առասպելները պատմում են բժշկության աստված Ասկլեպիոսի (հռոմեական՝ էսկուլապի) մասին: Նա բժշկություն սովորել է Կենտավրոս Քիրոնի մոտ, որը գիտեր բուժիչ բույսերի գաղտնիքները: Ասկլեպիոսը ուսման մեջ նույնիսկ գերազանցել է ուսուցչին: Նա նույնիսկ օձի թույնից էր բուժանյութեր ստեղծում, որի պատճառով էլ հաճախ կերպարվեստում նրան ներկայացնում էին վրան օձ փաթաթված գավազանով: Այդ խորհրդանշանը հետագայում դարձավ բժշկության նշանը (իմաստուն օձը՝ փաթաթված բաժակին, ուշադիր ուսումնասիրում է նրա մեջ լցված բուժանյութը): Ասկլեպիոսն ունեցել է որդիներ (Մաքաոն եւ Պոդալեյրիոս) եւ դուստրեր՝ Հիգիյա (առողջություն) եւ Պանակեյա (ամենաբույժ): Դուստրերն օգնել են հորը՝ բժշկելու մարդկանց: Սրանց անուններից էլ առաջացել են «հիգիենա» եւ «պանացեյա» տերմինները: Դիզենտերիան, խոլերան, հեպատիտը այնպիսի հիվանդություններ են, որոնց հարուցիչները կարող են թափանցել սննդի ու ջրի հետ: Մթերքի հետ աղիքներ կարող են թափանցել նաեւ մակաբույծների ձվեր, որոնք, դառնալով մակաբույծ որդեր, ապրում են մարդու եւ կենդանիների մարմնում: Դրանց մանր, աչքով ոչ տեսանելի ձվերը կարող են թափանցել հողի կամ չլվացված ձեռքերի կեղտի հետ: Վտանգավոր են թափառող անասունների մորթին, կիսաեփ միսն ու ձուկը:

Այս պատճառով անհրաժեշտ է պահպանել հիգիենայի կանոնները, որպեսզի արգելվի մակաբույծների թափանցումն օրգանիզմ: Իսկ դրանք շատ պարզ ու մատչելի կանոններ են, որոնք փոխանցվել են մեզ տատիկներից ու մայրիկներից:

Առաջին հերթին՝ չի կարելի խմել գետերի եւ լճերի ջուրը: Սնունդ ընդունելուց առաջ անհրաժեշտ է օճառով լվանալ ձեռքերը: Ուտել կարելի է միայն լավ լվացած մրգեր ու բանջարեղեն: Եղունգները հարկավոր է միշտ կտրել, որպեսզի այնտեղ չստեղծվի զանազան մանրէների կուտակում:



Օրը երկու անգամ պետք է լվանալ ատամները: Խորը քերծվացքի կամ կտրվածքի դեպքում խորհուրդ է տրվում այն լվանալ ջրածնի պերօքսիդով (перекись водорода), եզրերը հարկավոր է մշակել յոդի լուծույթով:

Եթե բաց վերքի մեջ կեղտ կամ հող է անցել, հարկավոր է դիմել բժշկի: Ներարկման միջոցով բժիշկը օրգանիզմ կներմուծի այնպիսի նյութեր, որոնք արգելում են վտանգավոր մանրէների բազմացումը:

Մանրէները կարող են բազմանալ նաեւ մարդու մաշկի վրա: Ուստի առնվազն շաբաթը մեկ անգամ հարկավոր է լողանալ, իսկ դեմքն օճառով լվանալ ամեն օր: Մարդու օրգանիզմն անվերջ պայքարի մեջ է պաշտպանական արգելափակոցների ճեղքերով օրգանիզմ թափանցող մանրէների հետ, դրա վկայությունն են նաեւ մաշկի վրա առաջացող պզուկներն ու չիբանները: Դրանց ներսում պարունակվում են դեռեւս կենսունակ մանրէներ, որոնց, մեր օրգանիզմը՝ չկարողանալով ոչնչացնել, խելացի կերպով հավաքագրել է, մեկուսացրել եւ դատապարտել «սովամահության»: Ուստի ոչ մի դեպքում չի կարելի դրանց ձեռք տալ, սեղմել: Որքան էլ համարվի տգեղ կամ տհաճ երեւույթ, այնուամենայնիվ, դա մեր օրգանիզմի պայքարի ձեւերից մեկն է: Ավելի լավ է՝ մարդն ինքն իրեն մեղադրի այն բանում, որ ավելորդ մանրէների մեջ է «քիթ խոթել», քան սեղմի ու պարպի դրանք: Պզուկներին ձեռք տալը շատ վտանգավոր է: Եթե պզուկի պարունակությունը հանկարծ անզգուշաբար թափանցի արյան մեջ, կարող է առաջանալ վտանգավոր հիվանդություն՝ արյան վարակ:

### ԱԽՏՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԲՈՒԺՈՒՄ

Բժիշկը նախեւառաջ պետք է ախտորոշի հիվանդությունը, որպեսզի որոշի, թե ինչով է հիվանդ այցելուն: Ախտորոշման կարեւոր փուլ է հարցուփորձը, երբ հիվանդի գանգատներով ի հայտ են գալիս առաջին ախտանշանները:

Այնուհետեւ հերթը ստուգմանն է, սրտի աշխատանքի, երակային ճնշման չափմանը: Հաճախ այսքանն արդեն բավարար է լիարժեք ախտորոշման համար: Սակայն, երբեմն առավել նուրբ հարցերում բժշկությունը կարիք ունի առավել խորագնին ուսումնասիրության:

Երբ ախտորոշումը պարզ է, կարելի է անցնել բուժման ընթացքին: Եթե բուժումը նեղ մասնագիտական մոտեցում է պահանջում, հիվանդին հարկավոր է ուղարկել համապատասխան բժշկի մոտ: Շատ դեպքերում բուժումն իրականացվում է դեղերով, որոնք ազդում են օրգանիզմի վրա այնպես, որպեսզի վերացվեն հիվանդության պատճառները: Բուժման այլ եղանակներ են անկողնային ռեժիմը, ֆիզիոթերապիան, ճառագայթումը եւ այլն, ընդհուպ մինչեւ վիրաբուժական միջամտություն:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Վախկոտները չար են լինում, վախենում են պարտվել, ու երբ մի տեղ լավն են տեսնում, աշխատում են ժխտել:

***ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ***
***(1920-2013)***
***Հայ բանաստեղծ***

Խանդոտ փեսացուներից ստացվում են անտարբեր ամուսիններ:

***ՄԱՅՆ ՌԻԴ***
***(1818-1883)***
***Ամերիկացի գրող***

Երկու սեռի մոտ էլ խոր ծերության վիճակը կախված է նրանից, թե ինչի համար է ծախսվել երիտասարդությունը:

***ՍՏԵՆԴԱԼ***
***(1783-1842)***
***Ֆրանսիացի գրող***

Ամեն մի դժբախտության մեծությունը չափվում է ոչ թե իր էությամբ, այլ նրանով, թե այդ դժբախտությունը ինչպես է ներգործում մարդու վրա:

***Հ.ՍԵՆԿԵՎԻՉ***
***(1846-1916)***
***Լեհ գրող***

Հիստերիան հիվանդություն չէ, այլ բնավորություն. այդ բնավորության գլխավոր գիծը ինքնաներշնչումն է:

***Ժ.ԴՅՈՒԲՈՒԱ***
***(1478-1555)***
***Ֆրանսիացի բժիշկ***

Եթե կյանքը խաղ է, ապա ընտանեկան կյանքը շախմատ է, եւ այնտեղ, որտեղ պատ է, մատը իրավիճակից դուրս գալու ելք չէ:

***Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Ü°Î¸àÎÜ°ð

** Տարեց ամուսնական զույգն ընկնում է դրախտ: Արեւը փայլում է, ծիտիկները՝ դայլայլում, շուրջը անասելի գեղեցկություն է, սիրտը բերկրանքով է լցվում: Հանկարծ ամուսինը շուռ է գալիս ու տո'ւր թե կտաս կնոջ ծոծրակին: Վերջինս.*

*- Ինչի՞ համար:*

*- Եթե չլիներ ծավարի շիլայով տխմար դիե-տադ, արդեն երկու տարի այստեղ ապրելիս կլինեինք:*

** Զրուցում են երկու ընկեր.*

*- Կարող ես շնորհավորել ինձ, մի շաբաթից ամուսնանում եմ:*

*- Օ՜, իսկ հարսնացուդ լա՞վն է:*

*- Չէ'... Պարզապես տղերքը խմել են ուզում:*

** Հայրը՝ դստերը.*

*- Մայրիկդ առանց հովանոցի դուրս եկավ, ու տես, թե ինչ անձրեւ սկսվեց:*

*- Մի' անհանգստացիր, հայրիկ, կարծում եմ, նա կհասցնի վազել մի որեւէ խանութ ու սպասել այնտեղ անձրեւի դադարելուն:*

*- Այ հենց դրանից էլ վախենում եմ:*

** Ուսանողը դուրս է գալիս քննությունից: Ընկերները՝ հուզված.*

*- Դե, հանձնեցի՞ր:*

*- Ոնց որ թե, հանձնեցի...*

*- Իսկ ի՞նչ էր հարցնում:*

*- Ո՞վ գիտի, ախր անգլերեն էր խոսում:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ



*Դեկտեմբերի 10-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Էրիկ Ռուբինին:*

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը ողջունել է հյուրին եւ կարեւորել նրա այցը հայ-ամերիկյան հարաբերությունների համակողմանի եւ բազմաբնույթ երկխոսության շարունակականության տեսանկյունից:

Հանդիպմանը երկուստեք բարձր է գնահատվել Հայաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ հարաբերությունների ներկայիս մակարդակը: Զրուցակիցները պատրաստակամություն են հայտնել զարգացնել այդ հարաբերություններն ու երկու երկրների միջեւ ընդլայնել փոխգործակցությունը, որտեղ, կողմերի համոզմամբ, զգալի ներուժ կա:

Հանդիպմանն անդրադարձ է եղել ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերջին զարգացումներին: Նախագահ Սերժ Սարգսյանը եւ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնականը մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային եւ միջազգային մի շարք խնդիրների շուրջ:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

*Դեկտեմբերի 12-ին Ազգային ժողովը քվեարկությամբ ընդունեց Հայաստանի 2014 թվականի պետական բյուջեի նախագիծը: Հայաստանի 2014 թվականի պետբյուջեի նախագծին կողմ քվեարկեց 70 պատգամավոր, դեմ՝ 40, ձեռնպահ՝ 1:*



2014 թվականի պետական բյուջեի նախագծում ի սկզբանե սահմանվել էր ծախսային մասը՝ 1 տրիլիոն 272 մլրդ 237 մլն դրամ, եկամտային մասը՝ 1 տրիլիոն 127 մլրդ 400 մլն դրամ: Ազգային ժողովում քննարկումների ժամանակ, սակայն, ստացվել էին 326 առաջարկություններ, որոնցից կառավարությունն ընդունելի է համարել 31-ը, կատարվել են որոշակի փոփոխություններ: Արդյունքում՝ նախագծի նախնական տարբերակով նախատեսված ընդհանուր եկամուտների գումարն ավելացել է 1 միլիարդ 440 միլիոն դրամի չափով: Նախագծի նախնական տարբերակով նախատեսված ծախսերի ընդհանուր գումարը եւս ավելացել է՝ 1,48 միլիոն դրամի չափով: Միաժամանակ, նախագծի նախնական տարբերակի ելքերի կազմում առաջարկվել է կատարել շուրջ 29,6 միլիարդ դրամի վերաբաշխումներ, որի արդյունքում կավելացվեն արտարժութային պետական պարտատոմսերի տոկոսավճարների գծով ծախսերը՝ շուրջ 17 միլիարդ դրամով, նախնական ուսումնական հաստատությունների վերանորոգման եւ երկու քոլեջների սահմանափակ կարողություններով ուսանողների համար սանդուղքներ, թեքահարթակներ, բազրիքներ եւ վերելակներ կառուցելու համար նախատեսված գումարները՝ 1,2 միլիարդ դրամով: Նշենք, որ 2014 թվականի բյուջեի նախագծի քննարկմանը իր եզրափակիչ ելույթում Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, խոսելով բյուջեի առաջնահերթությունների մասին, նշեց՝ կենսաթոշակների պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրումը Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման խթան է համարում:

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ




*Դեկտեմբերի 12-ին Երեւանում բացվեց Սեւծովյան տնտեսական համագործակցության անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի 29-րդ նստաշրջանը, որի ընթացքում ամփոփվեցին կազմակերպությունում Հայաստանի վեցամսյա նախագահության արդյունքները:*

Նստաշրջանին մասնակցելու նպատակով Երեւան էին ժամանել կազմակերպության անդամ պետությունների բարձրաստիճան պատվիրակությունները, այդ թվում՝ Բուլղարիայի արտաքին գործերի նախարար Քրիստիան Վիգենինը եւ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, ՍԾՏՀ Գլխավոր քարտուղար Վիկտոր Ցվիրկունը: Նախարարական հանդիպման ժամանակ ՍԾՏՀ-ում նախագահությունը Հայաստանից փոխանցվեց Բուլղարիային:

Նիստն անցկացվում է «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում եւ ուղեկցվում էր հյուրանոցի դիմաց բողոքի ակցիայով Դավութօղլուի այցի դեմ: Հավաքված երիտասարդները Դավութօղլուին Հայոց ցեղասպանության ճանաչման, ուրացման դադարեցման պահանջներ են հնչեցրել: Նշենք, որ Սեւծովյան տնտեսական համագործակցության անդամ երկրներն են Ալբանիան, Հայաստանը, Ադրբեջանը, Բուլղարիան, Վրաստանը, Հունաստանը, Մոլդովան, Ռումինիան, Ռուսաստանը, Սերբիան, Թուրքիան, Ուկրաինան:

ՍԾՏՀ կազմակերպությունը կոչված է տնտեսական համագործակցության միջոցով ամրապնդել կայունությունը Սեւծովյան տարածաշրջանում եւ այն վերածել բարգավաճման գոտու: Կազմակերպության աշխարհագրությունը ծածկում է մոտ 20 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք՝ ընդգրկելով երկու մայրցամաքներում գտնվող Սեւծովյան, Բալկանյան եւ Կովկասյան երկրներն ու ներկայացնելով դրանց մոտ 350 միլիոն բնակչությունը:

## ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵՑ ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

*Դեկտեմբերի 12-ին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հետ հանդիպման ժամանակ Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը վերահաստատեց Հայաստանի սկզբունքային դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորման վերաբերյալ:*

Ավելի վաղ լրագրողների հետ զրույցում Էդվարդ Նալբանդյանը նշեց, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացն այլ հարցերի հետ կապելը, նախապայմաններ առաջադրելու փորձերն ապարդյուն են եւ անիմաստ: «Հայաստանի, նաեւ միջազգային հանրության մոտեցումը հստակ է. հայ-թուրքական հարաբերությունները պետք է կարգավորվեն առանց նախապայմանների: Թուրքական կողմի փորձերը՝ կապակցել հարաբերությունների կարգավորումն այլ հարցերի հետ կամ առաջ քաշել նախապայմաններ՝ ապարդյուն են եւ անիմաստ»,- ասել էր Հայաստանի ԱԳ նախարարը:

Էդվարդ Նալբանդյանի եւ Ահմեդ Դավութօղլուի հանդիպումը տեղի է ունեցել Երեւանում կայացած Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության նախարարների խորհրդի 29-րդ նստաշրջանի շրջանակներում:



## ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԿԻՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԸ




*Հայաստանում կանանց ստեղծած ֆիլմերի խթանմանն ու նոր անունների բացահայտմանը միտված «Կին» միջազգային կինոփառատոնը կմեկնարկի այսօր՝ դեկտեմբերի 14-ին, եւ մինչեւ 18-ը կշարունակվի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում: Փառատոնի ծրագրում ներկայացված է 81 ֆիլմ՝ 27 երկրից:*

Կնոջ դերը հասարակության մեջ վերաիմաստավորող եւ կինոլեզվի միջոցով իգական սեռի ներկայացուցիչների խնդիրները արծարծող կինոփառատոնն այս տարի կտոնի իր ստեղծման 10-րդ հոբելյանը:

Ինչպես նշեց փառատոնի տնօրեն Մարիամ Օհանյանը, այս տարի փառատոնին ներկայացված են կարճամետրաժ ֆիլմեր Իսպանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Իսրայելից, Ուկրաինայից, Բելոռուսից, Լեհաստանից եւ այլ երկրներից: Հայաստանից եւս կան մի շարք կինոնկարներ:

Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացվող «Կին» կինոփառատոնը առաջին անգամ անցկացվել է 2003թ.-ին, ցուցադրվել են վերջին տասնհինգ տարիներին ստեղծված հայ կին ռեժիսորների ֆիլմերը:

### ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

*Հայաստանի պետական բյուջեի եկամուտները 2013 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել են շուրջ 876,5 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 814 մլրդ դրամ, որոնք, համապատասխանաբար, 81,6% ով եւ 76,5%-ով ապահովել են Հայաստանի կառավարության տարեկան ծրագրի կատարումը՝ նախորդ տարվա 80,9%-ի եւ 76,9%-ի դիմաց: Նախորդ տարվա տասն ամիսների համեմատ արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների աճի տեմպի արագացում 16,5%-ով՝ նախորդ տարվա 9,1%-ի դիմաց. այն հիմնականում ապահովվել է հարկային եկամուտների աճի հաշվին: Պետական բյուջեի եկամուտների 94,4%-ը ձեւավորվել է հարկային եկամուտների եւ պետական տուրքերի, 5%-ը՝ այլ եկամուտների, 0,6%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին:*

### ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Հայաստանի փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանն ընդունել է Համաշխարհային բանկի (ՀԲ) պատվիրակությանը՝ ՀԲ Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կայուն զարգացման ոլորտի ղեկավար Ահմեդ Էյվեյդայի (Ahmed Eiweida) գլխավորությամբ: Հյուրերը փոխվարչապետին տեղեկացրել են երկրի գործընկերության ռազմավարության շրջանակում նախատեսվող տարածքների զարգացման ծրագրի նախնական ուղղությունների մասին՝ դրանց վերաբերյալ կարեւորելով Հայաստանի կառավարության եւ ոլորտային նախարարության մոտեցումները: Կողմերը քննարկել են նաեւ ծրագրի մեկնարկի ժամկետների, ֆինանսավորման հետ կապված հարցեր:*

### ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ

*Դեկտեմբերի 10-ին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Էրիկ Ռուբինի, Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆֆերնի, Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Նորլանդի եւ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մորնինգստարի հետ, որոնք Երեւան են ժամանել Հարավային Կովկասի երկրներում ԱՄՆ դեսպանների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով:*

*Հանդիպմանն անդրադարձ է կատարվել հայ-ամերիկյան գործընկերության ամրապնդման նպատակով ձեռնարկվող քայլերին:*

*Զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերջին զարգացումներին, արծարծվել են նաեւ միջազգային եւ տարածաշրջանային խնդիրներ:*

### ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

*Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի նախագահությամբ անցկացվեց Անվտանգության խորհրդի նիստ, որի օրակարգում ընդգրկված էին 2013թ. հեռուստամարաթոնին եւ ԼՂՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի նախագծին վերաբերող հարցեր:*

*ԼՂՀ նախագահը ներկայացրել է հեռուստամարաթոնի ընթացքն ու արդյունքները եւ համապատասխան հանձնարարականներ տվել հանրապետության կառավարությանը՝ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի շինարարության պատշաճ իրականացման ուղղությամբ:*

*ԼՂՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի մասին զեկույցներով հանդես են եկել ԼՂՀ վարչապետը, փոխվարչապետը, գյուղատնտեսության նախարարը եւ ազգային վիճակագրական ծառայության նախագահը:*

*Բակո Սահակյանը հավանություն է տվել պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի նախագծին՝ հանձնարարելով Անվտանգության խորհրդի քարտուղարին սահմանված կարգով ընթացքավորել եւ հաստատման ներկայացնել հայեցակարգի նախագիծը՝ համապատասխան հանձնարարականներով:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ԴԵԿՏԵՄԲԵՐ



*19.12.2013. Տոն Սուրբ կույսերի՝ Ինդոսի, Դոմնայի, Գղերիկոս քահանայի եւ երկու բյուր նահատակների, որոնք այրվեցին նիկոմիդացիների եկեղեցում*

*21.12.2013. Սուրբ Աբգար նախավկայի եւ Քրիստոսին հավատացող մեր անդրանիկ թագավորի հիշատակության օր*

*23.12.2013. Սուրբ Դավիթ մարգարեի եւ Հակոբոս Տյառնեղբայր առաքյալի հիշատակության օր*

*24.12.2013. Սուրբ Ստեփանոս նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակության օր*

## ՖՈՒՏԲՈԼ

### ԱՆԾԿԱԾՎԵԾ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ




Կայացավ աշխարհի ֆուտբոլի 2014 թվականի խմբերի վիճակահանությունը, որին ներկա էին մի շարք ազգային հավաքականների գլխավոր մարզիչներ եւ ֆուտբոլային աշխարհի ականավոր ներկայացուցիչներ:

4 զամբյուղներից ձեւավորվեցին հետեւյալ խմբերը՝

A՝ Բրազիլիա, Խորվաթիա, Մեքսիկա, Կամերուն,

B՝ Իսպանիա, Նիդերլանդներ, Չիլի, Ավստրալիա,

C՝ Կոլումբիա, Հունաստան, Կոդ դ' Իվուար, Ճապոնիա,

D՝ Ուրուգվայ, Կոստա Ռիկա, Անգլիա, Իտալիա,

E՝ Շվեյցարիա, Էկվադոր, Ֆրանսիա, Հոնդուրաս;

F՝ Արգենտինա, Բոսնիա-Հերցոգովինիա, Իրան, Նիգերիա,

G՝ Գերմանիա, Պորտուգալիա, Գանա, ԱՄՆ,

H՝ Բելգիա, Ալժիր, Ռուսաստան, Հարավային Կորեա:

Աշխարհի ֆուտբոլի 20-րդ առաջնությունը կանցկացվի 2014 թվականին Բրազիլիայում: Այն կմեկնարկի հունիսի 12-ին, իսկ եզրափակիչ հանդիպումը կկայանա հուլիսի 13-ին: Առաջնության խաղերը կանցկացվեն բրազիլական 12 մարզադաշտերում:

## ՁՆԱՏԵՂՈՒՄՆԵՐ

### ՀԱՏՈՒԿ ԽՈՒՄԲ՝ ԱՆՕԹԵՎԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Ուժեղ ձնատեղումների պատճառով Վրաստանի առանձին մայրուղիներում հաստատվել են սահմանափակումներ: Մասնավորապես, Մանգլիսի-Ծալկա-Նինոծմինդա ավտոճանապարհի վրա կցիչներով եւ կիսակցիչներով երթեւեկությունն արգելված է: Իսկ ինչ վերաբերում է տրանսպորտային մյուս միջոցներին, ապա դրանց երթեւեկությունը թույլ է տրվում հատուկ շղթաների միջոցով: Նման սահմանափակում է հաստատված նաեւ Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարսի ճանապարհահատվածում:*

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու որոշմամբ, ձմեռային ժամանակաշրջանում անօթեւանների հիմնախնդիրների լուծման համար հիմնվել է հատուկ արտակարգ խումբ:

Ինչպես տեղեկացրել է վարչապետի մամլո ծառայությունը, Իրակլի Ղարիբաշվիլու որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական արտակարգ աշխատանքային խումբ, ում, մասնավորապես, ուժեղ սառնամանիքների կապակցությամբ հանձնարարվել է կարճ ժամանակամիջոցում անօթեւաններին ապահովել ժամանակավոր ապաստարանով: Խումբը, որի կազմի մեջ ներգրավված են էներգետիկայի, առողջապահության, էկոնոմիկայի, կայուն զարգացման եւ ֆինանսների նախարարության պաշտոնատար անձինք, կգլխավորի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան:

Խմբի աշխատանքին անմիջականորեն կհետեւի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Ինչպես նշեց արտակարգ խմբի ղեկավար Դավիթ Նարմանիան, ներկայումս աշխատանքներ են տարվում այն վայրի սահմանման համար, որտեղ տեղադրվելու են վագոններ, ուր ապրելու է շուրջ 300 մարդ: Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն իր կողմից հայտարարել է, որ արդեն մշակվել է անօթեւանների տաք կերակուրով եւ դեղորայքով ապահովելու ծրագիրը:

### ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՒՄ



*Ուժեղ ձնատեղումների պատճառով Վրաստանի առանձին մայրուղիներում հաստատվել են սահմանափակումներ: Մասնավորապես, Մանգլիսի-Ծալկա-Նինոծմինդա ավտոճանապարհի վրա կցիչներով եւ կիսակցիչներով երթեւեկությունը արգելված է: Իսկ ինչ վերաբերում է տրանսպորտային մյուս միջոցներին, ապա դրանց երթեւեկությունը թույլ է տրվում հատուկ շղթաների միջոցով: Նման սահմանափակում է հաստատված նաեւ Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարսի ճանապարհահատվածում:*

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի օդերեւութաբանական կենտրոնը, դեկտեմբերի 14-ի գիշերը Արեւմտյան Վրաստանում ջերմաստիճանը կտատանվի մինուս 7-ից մինչեւ 22 աստիճան, իսկ Արեւելյան Վրաստանում՝ մինուս 12-20 աստիճան: Թբիլիսիում սպասվում է մինուս 6 աստիճան ցուրտ:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան, վարորդներին կոչ է արել առանց ծայրահեղ անհրաժեշտության հրաժարվել ուղեւորություններից կամ դրա համար օգտագործել ձմեռային անվադողեր եւ հակասահանքի շղթաներ:

«Չնայած նրան, որ անընդմեջ ընթանում է ճանապարհների մաքրման աշխատանքը, տեխնիկական աղի ցրումը, վարորդներին կոչ եմ անում առանց ծայրահեղ անհրաժեշտության հրաժարվել երթեւեկություններից»,- հայտարարեց Նարմանիան՝ հավելելով, որ պարեկային ոստիկանությունը խցանումների կանխման համար համակարգված աշխատանք է իրականացնում:

Վրաստանի ՆԳ նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը փակ է:

Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքով անցնող ավտոճանապարհներին, ապա դժվարանցանելի են Երեւան-Սեւան մայրուղին, Տավուշի մարզի Դիլիջանի ոլորանները, Սպիտակ-Երեւան, Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհները:

### ԴՊՐՈՑՆԵՐԸ ՓԱԿՎԵԼ ԵՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Ձյան առատ տեղումների եւ ցրտերի հետ կապված դժվարությունների պատճառով Վրաստանի 85 հանրակրթական դպրոցներում դադարեցվել է ուսումնական գործընթացը: Այդ մասին դեկտեմբերի 13-ին հայտարարեց կրթության եւ գիտության նախարարության հանրակրթության կառավարման եւ զարգացման դեպարտամենտի ներկայացուցիչ Թամար Մենապիրեն:

Դպրոցական պարապմունքների դադարեցման հիմնական պատճառներն անբարենպաստ եղանակով պայմանավորված խնդիրներն են՝ կապված ջեռուցման, էլեկտրաէներգիայի մատակարարման, ինչպես նաեւ ճանապարհների անանցանելիության հետ:

85 դպրոցներից 69-ը գտնվում են Աջարիայի Ինքնավար Հանրապետության Խուլոյի եւ Խելվաչաուրիի բարձրալեռ շրջանների գյուղերում, մնացած 16 հաստատությունները՝ Իմերեթի, Սվանեթի եւ Կախեթի տարածաշրջանների բարձրալեռ գյուղերում:

### ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՃԱԲՈՒԱ ԱՄԻՐԵՋԻԲԻՆ



Դեկտեմբերի 13-ին, 92 տարեկան հասակում, ծանր եւ երկարատեւ հիվանդությունից հետո վախճանվել է ճանաչված գրող Ճաբուա Ամիրեջիբին: Երեք ծավալուն՝ «Դաթա Թութաշխիա», «Մբորգալի լեռը», «Գիորգի Պայծառը» վեպերի համար Ճաբուա Ամիրեջիբին արժանացել է Շոթա Ռուսթավելու անվան մրցանակի: Նրա աշխատությունները թարգմանվել են աշխարհի 29 լեզուներով: Ճաբուա Ամիրեջիբին հանդիսանում էր մի շարք մրցանակների դափնեկիր, Պատվո շքանշանի, Վախթանգ Գորգասալու առաջին եւ երկրորդ աստիճանի շքանշանների ասպետ: Ճաբուա Ամիրեջիբիի կենսագրությունը ներառված է Քեմբրիջի եւ ԱՄՆ-ի կենսագրական տեղեկատուներում:

***«Վրաստան» թերթի խմբագրությունը խոր ցավով ընկալեց Ճաբուա Ամիրեջիբիի մահը եւ ցավակցում է հանգուցյալի ընտանիքին ու հարազատներին:***



## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Անգլիացի գրող ... Քիփլինգ: 9.Քաղաք Թուրքիայում: 10.Համեմ: 11.Ֆրանսիացի երգահան Հեկտոր Լուի ...: 13.Ներգործել, ազդեցություն ունենալ: 16.Աշակերտ, դպրոցական: 17.Վսեմ, բարձր: 19.Նստաշրջան: 22.Գալիք, եկող ժամանակ: 24.Քարավանատուն Վայոց Ձորում (1332թ.): 25.Իտալացի ֆուտբոլիստ, դարպասապահ ... Մանոննե: 27.Երգիծաբանություն: 29.Բետոնից սարքած: 32.Երկայնավիզ չվող թռչուն, խորդ: 33.Հռոմեական բանակի զորամիավորում: 35.Գերմանացի հայտնի լրագրող ... Էնգելկե: 38.Ըստ հին հունական դիցաբանության՝ մարդկանց նախամայրը եւ Զեւսի կինը: 40.Լարել, ձգել: 41.Չկամեցող: 44.Կիպ, մոտ: 47.Չար ոգիների մարմնավորում վրացական դիցաբանությունում: 48.Տիկին (բռբ): 50.Գունագեղ հեթանոսական փառատոն Ֆիլիպիններում «Աթի-...»: 51.Հատուկ ծիսակարգով պատրաստած իր, առարկա, որ կրողին իբրեւ թե պաշտպանում է զանազան փորձանքներից, հուռութ: 52.Մեսրոպյան այբուբենի տառ: 53.Ռուսական բեռնատար մեքենա: 54.Խոնավությունից զուրկ, ցամաք: 55.Բարակի հականիշը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Թունդ գինու տեսակ: 2.Քաղաք Գերմանիայում: 3.Գյուղական համայնք Հայաստանի Արագածոտնի մարզում: 4.Վրացիների հորեղբայրը: 5.Հույս (ժող.): 6.Կարեկցել, խղճալ: 8.Գերմանացի հայտնի գյուտարար եւ ինժեներ, դիզելային շարժիչի հայտնագործող Ռուդոլֆ ...: 12.Ազնվական տիտղոս Հնդկաստանում: 14.Թորել, մաքրել: 15.Չգիտեմ (ժող.): 18.Կոնգոն մինչեւ 1997թ. (Աֆրիկա): 19.Հայ հեղափոխական գործիչ ... Սպանդարյան: 20.Հայ գրող ... Խանզադյան: 21.Գետ Շվեյցարիայում: 23.Երկիր Արեւմտյան Աֆրիկայում: 26.... ու վրա անել: 28.Հեթանոս հայերի արեւի պաշտամունքը մարմնավորող աստվածը: 29.Համալսարան, ինստիտուտ: 30.Անզոր, թույլ: 31.Հաղթանակի դիցուհին հին հունական դիցաբանությունում: 34.Վրաց ուղղափառ եկեղեցու խոշորագույն միջնադարյան վանք, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտ: 36.Հացի տեսակ: 37.Սկզբնակետ, մեկնակետ: 39.Պայտ: 42.Աղաղակ, ճիչ, գոչյուն: 43.Հայոց դիցարանում եղել է լույսի եւ մաքրության աստվածը: 45.Ռուսական ավտոբուսի մակնիշ: 46.Բույսի մատղաշ ընձյուղ: 48.Շարժական գույք, կարասի, կահույք: 49.Լատինական այբուբենի տառ:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Թթվասեր: 5.Վարսանդ: 11.Հավասար: 12.Շվի: 13.Խողովակ: 15.Այծ: 16.Տղա: 17.Կուր: 18.Խոյ: 19.Նավթավառ: 22.Ուղեկալ: 24.Կով: 27.Կոր: 28.Ամ: 29.Մարգար: 34.Վալս: 35.Մոմ: 36.Շաղ: 37.Մղոն: 40.Նիկուլին: 41.Գավ: 42.Փարվանա: 44.Կաչաղակ: 45.Օրավարձ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Թթվածին: 3.Արսեն: 4.Եփրատ: 6.Աշխոր: 7.Սեղմ: 8.Նավախել: 9.Աշտարակ: 10.Վիսկի: 11.Հրատ: 14.Կայեն: 20.Վեր: 21.Ռոմ: 23.Կիր: 25.Վարշավա: 26.Սեւան: 27.Կիլիկիա: 28.Արմենիա: 30.Գաղափար: 31.Տաղ: 32.Օմեգա: 33.Աննա: 38.Ալմա: 39.Գրավ: 43.Ակր:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445